

կարգ արարմունն նորին: Եւ ընդ նմին յուսա-
 դրախտոն պատուէր՝ զի Թարց այլեւայլ պատ-
 ճառադրութեանց ելեալ եկեսցէ ի ս. Աթոռս:
 Զի ի գալի՞ր՝ եթէ ի ս. Աթոռոջս եւ թէ արտա-
 քին քեզ պատշաճ գործ ինչ խնդրեսցես ասէ.
 տաց քեզ: Իսկ թէ յամառեալ ի չարիսդ ոչ
 եկեսցես ասէ ի ս. Աթոռս, լուծեցեալ ես ասէ
 յեպիսկոպոսական կարգէդ, եւ ոչ ունիս ասէ ի
 մէջ Հրաման եպիսկոպոսութիւն առնելոյ:»
 Նոյնպէս կարմիր վանաց Առաջնորդ Յակոբ Ա. ին
 կը գրէ. «Պատուէր՝ զի այսուհետեւ յԱխլխա
 սեւադլուխ եւ մարդ մի յղեսցէ, եւ մի ձեռնա-
 մուխ լիցի նմա. զի Ախլխա ընդ կարսայ Ար-
 քունական Փարմանաւ «տէրունի վիճակ» վճռե-
 ցաւ: (Որպէս եւ կարին): Եւ պատուէր՝ զի
 զկարապետ Ա. ն ի ս. Աթոռս յղեսցէ: Իսկ թէ
 ոչ եկեսցէ ասէ նա յԱթոռս. լուծեալ է յե-
 պիսկոպոսական կարգէն:» Զայս կը կրկնէ նաեւ
 կարնոյ Առաջնորդ Յարութիւն Եպ. ին գրած
 նամակին մէջ:

Սիմէոնի Թղթերն (Դիւան Ը.) կը հասնին
 մինչեւ 1776ի վերջը: Կարապետ Արքեպ. ի վրայ
 սակայն ուրիշ յիշատակութիւն չկայ:

Եւ սակայն կարապետ Արքեպ. բռնու-
 թեամբ կարնէն Էջմիածին տարուած է, եւ այս
 առթիւ կարնոյ Յարութիւն Առաջնորդէն եւ
 անոր աջակիցներէն շատ նեղութիւն կրած պիտի
 ըլլայ: Կարապետ Արքեպ. վերն յառաջ բե-
 րուած տաղերէն Է. ին մէջ ինքնին կը պատմէ՝
 թէ քահանայք եւ իշխանք իրենց գլուխ ունե-